

պագային հետախաղաղ պիտի կորնչին . շմոռանամք աստ յիշելու որ՝ այդ մեծ աւանը ասկէ 200 տարի առաջ ծուխ համարուած էր Ս . Խաչ վանքին , որ բարձր լերան վերայէն կը դիտէր իւր ընդարձակ ծուխը , Կազարաթ մեծ աւանը : Այժմ դարձեալ կանգուն Ս . Խաչ իւր տեղ , և 1890 ին վայելչապէս նորոգուած , ի ձեռն Գերապատիւ Վարդապետին Խորէն Ստեփանէի , փոխանակ մեծ աւանին , գեղեցիկ ձորերուն և հովիտներու միայն կը տիրէ , որք ժամանակաւ բիւրաւոր Հայոց տեղի բնակութեան եղած են : Մեք այնպէս կ'ենթադրեմք , որ Կազարաց բնակութեան միջոց ի Տարիա , գաղթած լինին աստ բազմաթիւ հայ ժողովուրդ , և ունեցել են իրենց եկեղեցիները և վանքերը . այս ենթադրութեանս պատճառները , զատ առանձին գլխով կ'աւանդեմք ի ստորև , ի գիտութիւն սիրողաց ազգիս հին գաղթականաց պատմութեան :

Ի մտասաներորդ դարու կը դիմեն ի Տարիա Պեչէնէգ և Կսման կոչուած ազգերը , զորս կը հալածեն Մոնղոլ թաթարք , 200 ին վերջերը , առաջնորդութեամբ քաջակորով Բագու խանին , որ էր թոռն , ի պատմութեան նշանաւոր Ջինգիզ խանին , հաստատողի զիշխանութիւն Խըպչախաց , ու կի - ջոկատին :

Բաղու՝ Թէոդոսիոյ մօտաւոր , Սուլքայա այժմ Սուտաղ կոչուած հովտին եզերք , ապալեր սարերու վերայ կը հաստատէ իւր աթոռ , որոյ ստորոտը կը խորտակին անզուսպ ալիք Սև ծովու . և ժամանակ առ ժամանակ կու սփռէ հեղեղօրէն դէպ ի Լեհաստան և ի Ռուսաստան , և գերելով գերփելով այն ալխարհները , նոցա կանայք Սուլքայայ և Թէոդոսիոյ հրապարակաց վրայ ամօթալից և նախատեալ կը